ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 8

26 ԱՊՐԻԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստին ներկա էին 8 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը:

Բացակա էին Վրույր Այվազյանը, Արտյոմ Տոնոյանը, Վարսենիկ Քալաշյանը,Թամարա Գրիգորյանը, Համլետ Գևորգյանը Հրայր Թորոսյանը, Ալիկ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Գոռ Աղաջանյանը Կարեն Լալազարյանը, Մարտին Ալավերդյանը,համայնքապետարանի աշխատակիցներ ՝

Ս.Սուքիասյանը, Ա.Դավոյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Խաչիկ Վարդանյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը</u>:

Համայնքի Ղեկավարը ներկայացրեց օրակարգը, ավագանին քննարկեց և դեմ քվեարկեց օրակարգին՝ առաջարկելով օրակարգ ընդգրկել . Գյուլագարակ համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին հարցը:

Քննարկումից հետո ավագանին ՝ 8-կողմ, 0-դեմ ձայներով՝ հաստատեց նոր օրակարգը:

Օրակարգում՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
/Զեկ. Խ.Վարդանյան/

2. Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
/Զեկ. Ռ. Օհանյան/

3.Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/ԶԵԿ.Ս. Նալբանդյան/

4. Գյուլագարակ համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին
/Զեկ.Ս.Նալբանդյան/

5.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:
/ԶԵԿ.Ս. Նալբանդյան/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2024թ. ապրիլի
26-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 35-Ա/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ. Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝
համայնքի ավագանին որոշում է.
1.Ընդունել ի գիտություն Գյուլագարակ համայնքի 2024թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Գյուլագարակ համայնքի ղեկավարի հաղորդումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 36-Ա/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿ.Ս.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.
1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայքնի ավագանու 2023թվականի ապրիլի 20-ի «ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 53-Ա որոշումը:

3.Առաջարկել Գյուլագարակ համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերը ուժի մեջ են մտնում ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտը ուժի մեջ մտնելու պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 37-Ա/

Լսեցին՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿ.Ս.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակատռավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3 հոդվածի 8-րդ մասը և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ սահմանված կարգով, Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է
1.Հաստատել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություններ ստացած նախագծերը :
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնու ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 38-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.Մ.Նալբանդյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել մայիսի 14 - ը, ժամը՝ 9:30

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 39-Ա/

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ